

Լ. ԱՆԴՐԵՅԵՎ

ԱԱ

ԱՌԱՑՈՒԱԿ ՊԼԱՆԻ

— 24Ա

ԿՈԼԻԽՈԶ

Թարգմ. Շ. Ա. Բ. Դ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԱ
ՎՅՈՒԽՈՒՄՆԱԿԱ
Բանական Խուս
СССР

338.14
Ա-58

ԵՊՈՒ-ԱԿԱԴԵՄԻԱ ՅԵՐԱԲԵՐԵՒ
ՀՐԵՍԵՐԸ ԿՉՈՒԹՈՒՐԻ 1934

338.14
4-58

Հ. ԱՆԴՐԵԱՆ
Հա 34-ի
634

15 JAN 2010

ԱՐԱՅԻ ՊԼԱՆԻ — ԶԿԱ ԿՈԼԽՈԶ

ՀԽԲՀԱՆՑՔ
Института
Восточно-Дальнего
Равдения Наук
СССР

Յերկրորդ հնդամյակի առաջին տարում Խորհրդային Միությունը, մասնավորապես մեր Ազգա-Սելծովյան յերկրամասը, ձևոք ըերեց նոր մեծագույն հաջողություններ կոլխոզների ամրացման և նրանց բոլեմիկյան գարձնելու գործում: Այդ հաջողություններն իրենց կոնկրետ արտահայտությունը գտան հացահանձման պլանի վարդաժամկատարման, սերմացի ամրաբման և աշխատանքային կարգապահության ամրացման գործում: Հարյուրավոր և հազարավոր կոլխոզներ քաղրածինների ղեկավարությամբ իրականացնելով կուսակցության և բանվոր գասակարգի առաջնորդ ընկեր Ստալինի տպունդը, այն են՝ բոլոր կոլխոզները գարձնել բոլեմիկյան, իսկ կոլխոզնիկներին՝ ունեվոր—կարողացան կարճ ժամանակում այդ լողունգը գարձնել կենդանի գործ, կոլխոզային բայց մասսաներին հանել պայքարի՝ ունեվոր կուտուրական կյանքի համար, ամրացնելով սոցիալիստական աշխատանքային կարգապահությունը և կոլխոզային բարիքի պահպանությունը:

Ըսկեր Ստալինը հարվածային կոլխոզնիկների Համամիութենական առաջին համագումարում արտասահմած իր ձառնում ասում է.

«Ունեվոր կոլխոզնիկ դառնալու համար այժմ պահանջվում է միայն մի բան, աշխատել կոլխոզում ազնիվ,

13.02.2013

30381

ճիշտ ոգտագործել տրակտորներն ու մեքենաները, ճիշտ ոգտագործել աշխատող անասունները, ճիշտ մշակել հողը, պահպանել կոլխոզային սեփականությունը»:
Ընկեր Ստալինի այդ ցուցմունքները մեր յերկրամասի հարյուրավոր ու հազարավոր կոլխոզները քաղբաժինների ղեկավարությամբ, աղնվորեն կիրառեցին կյանքում, վորի շնորհիվ հաջողությամբ կատարեցին հացը պետության հանձնելու պարտավորությունները և ապահովեցին իրենց համար աշխորի բարձր յեկամուտ (հացով ու փողով):

Սակայն կոլխոզների հաջողությունների և մեծագույն հաղթանակների գաղտնիքը յերկրորդ հնգամյակի առաջին տարում թագնված եղու միայն նրանում, վոր նրանք աղնը վորեն կատարում են ընկեր Ստալինի ցուցմունքներն այն մասին, թե ինչպես կոլխոզնիկներին ունենալոր դարձնել: Վոչ միայն դրանում, այլ նաև նրանում, վոր զգալիորեն աճեց և ամրացավ կոլխոզային տնտեսության կուսակցական ղեկավարությունը: Ընկեր Ստալինը «Գյուղի աշխատանքի մասին» արտասահմած իր ճառում ասում է.

«...Ի՞նչ է հետեւ վում դրանից: Իսկ դրանից հետեւ վում է այն, վոր տնտեսավարության պատասխանատվության ծանրության կենարոնն այժմ փոխադրվել և առանձին դյուզացիներից կոլխոզային ղեկավարության վրա, կոլխոզի ղեկավար կորիգի վրա: Այժմ դյուզացիները պահանջում են տնտեսության մասին հոգացողություն և գործի խելացի վարում՝ վոչ այնքան իրենցից, ինչքան կոլխոզի ղեկավարությունից: Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Դա նշանակում է, վոր կուսակցությունն արդեն չի կարող այժմ սահմանափակվել գյուղատնտեսական զարգացման ընթացքում միջամտելու առանձին դրծողություններով: Նա այժմ իր ձեռքը պետք է առնի կոլխոզների ղեկավարությունը, իր վրա վերցնի աշխատանքի պատասխանատվությունը, յեվ ոգնի կոլխոզ-

նիկներին առաջ տանելու իրենց տնտեսությունը գիտության յեվ տեխնիկայի տվյալների հիման վրա»:
Այդ նպատակով, կուսակցության վորոշման համաձայն, ՄՏ կայաններում ստեղծվեցին քաղբաժիններ ստուգված, փորձված բոլեվիկներից բաղկացած, վորոնք կարողացան կարճ ժամանակում տալ հիմանալի աշխատանքի մի շարք որինակներ՝ կոլխոզային տնտեսության ղեկավարության, կոլխոզները բոլեվիկյան դարձնելու վերաբերյալ, իսկ կոլխոզնիկներին դարձնելով ակտիվ, կոլխոզային գործին նվիրված աշխատանքներ, վորոնք գնում են գեպի ունեվոր կուտուրական կյանքը:

II.

Հաջողության, պատասխանատվության և ղեկավարության ուժեղացումը կոլեկտիվ տնտեսություններում սերտորեն կապված և անբաժան ե կոլեկտիվ տնտեսություն կազմելուց՝ պլանի հիման վրա: Պլանը—դա կոլխոզի հիմքն է: Պլանի միջոցով և իրագործվում կոլխոզային արտադրության ղեկավարությունը պրոլետարական պետության կողմից, պլանի հիման վրա կոլխոզները կառուցում և ամրացնում են իրենց տնտեսությունը: Իսկապես, կարող ենին արդյոք կրկնություններն իրենց աշխատանքում այլպես արագ և կազմակերպված հաջողություններ ունենալ, յեթե նրանք աշխատելին առանց պլանի, պատահաբար, այսորվա պահանջների հիման վրա: Վոչ, չեյին կարող:

Կոլխոզներն առանց պլանի չեյին կարող գառնալ սոցիալիստական տնտեսությունն, նրանք անխուսափելիորեն պիտի քայլացնելին, գառնային հակախորհրդացային հակաբուզեկիցյան կազմակերպություններ: Այդ մասին հետեւյալն ասուցնկեր Ստալինը «Գյուղի աշխատանքի մասին» արտասահմած իր ճառում:

«Կոլխազը խուռ տնտեսություն է: Բայց խուռ տնտեսությունը չի կարելի վարել տռանց պլանի: Խուռ տնտեսությունը յերկրագործության մեջ, վոր ընդգրկում է հարցութափոր, յերեւնն ել հազարավոր տնտեսություններ, կարելի լի վարել միայն պլանային դեկավարության կարգով: Առանց դրան նա կիսուրակիլ յեվ կիայքայլիք»:

Պլանային սկզբունքի ամրացումը կոլխոզների աշխատանքում 1933 թվի ընթացքում, կոլխոզային տնտեսության պլանային գեկավարման ուժեղացումը պրոլետարական պետության կողմից—ահա թե ինչն և հանդիսանում բնորսշնչարագումար, վորով յերկիրը դիմավորեց կուսակցության 17-րդ համագումարը:

III.

Ինչու կոլխոզը պետք և աշխատի և կառուցի իր տնտեսությունը պլանի համաձայն՝ Նրա համար, վոր կոլխոզը խոչըր տնտեսություն և և այն ել սոցիալիստական տիպի տնտեսություն: Խոկ սոցիալիստական տիպի տնտեսություններն աշխատում են միայն պլանի հիման վրա: Պլանը—դա սոցիալիստական տնտեսության անբաժան մասն է: Կոլխոզում միացած են հարյուրավոր և հազարավոր հեկտար հողեր, հարյուրավոր և հազարավոր մարդիկ, հարյուրավոր զբուխ աշխատավոր անասուններ, հարյուրավոր զբուխ մթերատուկենանիներ, տասնյակ բարդ մեքենաներ և այլն: Արտադրության բոլոր այդ միջոցներն ու մարդիկ նրա համար են, վորպեսզի նրանց ոգտագործել արդյունավետ և դասավորել խելացիորեն, դասավորել այնպես, վոր նրանք իրարշխանգարեն, այլ կազմակերպվեն այնպես, վորպեսզի և աշխատանքում, և արտադրության մեջ, և կոլխոզային կյանքի յուրաքանչյուր տեղամասում ստանան տնտեսական մեծ հաջողություններ մի քանի հարյուր անգամ ավելի, քան թե անհատական տնտեսության ժամանակ:

Բայց հնարավոք եր արդյոք կոլխոզում կարգ հաստատել, յեթե նա վաղորոք չիմանար, թե որինակ՝ ի՞նչպես կազմակերպի գարնանացանը, վրաբեղ, ի՞նչպես յեվ ի՞նչ ձեզով ցանի, ի՞նչ հողամասերում, ի՞նչ ուժերով: Վայ, այդպիսի կոլխոզում չեր կարելի կարգ հաստատել: Մարդիկ այդպիսի կոլխոզում անխուսափելիորեն կշփոթվեն հասարակական արտադրության բարդության մեջ, կիսանդարեն միմիանց և անխուսափելիորեն կցրվեն ամեն կողմ, վորովհետև այդպիսի քասում ապրել ու աշխատել անկարելի յեւ:

Ահա թե ինչու կոլխոզում, վորպես խոշոր տնտեսության, հարկավոր և պլան—բոլեւկիլյան կազմակերպվածության ու կարգապահության հիմք: Առանց պլանի, վորպես կազմակերպված սոցիալիստական տնտեսության:

IV.

Արդյոք ամեն մի պլան հարկավոր և կոլխոզին, արդյոք ամեն մի պլան հանդիսանում ե կոլխոզի կազմակերպչական տնտեսական ամրացման յեվ, նրան բոլցեվիլյան ամրոց գարձնելու գենք: Վայ, կարող ենք արդյոք կոլխոզի ամրացման գենք համարել այն պլանը, վորը կոլխոզային տնտեսության զարգացումն ուղղում և վոչ թե բոլցեվիլյան ուղիով, այլ պրոլետարական պետության շահերին հակառակ:

Վայ, չենք կարող: Իրոք, յեթե կոլխոզի արտադրականագինանսական պլանը նախատեսեր ցանքի կրծատում, բերքի նվազում, անասունների կրծատում ապրանքային ֆերմաներում, կոլխոզի ու կոլխոզնիների յեկամտի պակասեցում, ապա այդ պլանը կիմեր վոչ թե կոլխոզի ամրացման գենք, այլ նրա քայլքայման, անկման դործիք: Այդպիսի պլանը ձեռնտու կիմեր դասակարգային թշնամուն—կուլակին, ծույլին, կորզողին, վորոնք փորձում են գասակարգա-

յին զգունության թուլացման դեպքում ոգտագործել կոլխոզ-ները խորհրդային իշխանության յեկ բանվոր դասակարգի դեմ: Հետեւվարար կոլխոզի վոչ ամեն պլանը կարող է նրա աշխատանքի հիմքը դառնալ:

Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես ե պլանը կազմվում, ինչ հիմք ու շահեր յելակեա ունի: Ցերե պլանը կառուցվում ե պրոլետարական պետության շահերի հիման վրա, այսինքն՝ կոլխոզի ու կոլխոզիների բոլցեվիկյան ամրացման հիման վրա, նրա անցկացման համար պետք է պայքարել Ընդհակառակն, այն պլանը, վորը կառուցված է կոլխոզը թուլացնելու նպատակով, վորպես սոցիալիստական տնտեսություն և — ուղղել նրա զարգացումը կուլակի ու նրա համախոնների ցուցմունքով, ընդդեմ պետության ու կոլխոզիների շահերի, այդպիսի պլանը մշասակար, կուլակային պլան ե: Իսկ կոլխոզային ինչպիսի պլանը կարելի յե ոգտակար համարել Այն պլանը, վորը հիմնված ե պրոլետարական պետության ժողովնեսական առաջարրության վրա, յենում ե կոլխոզի զարգացման շահերից, յենում է կոլխոզը բոլցեվիկյան ամրոց գարձնելու, իսկ կոլխոզիներին ունենվոր կուլական աշխատազներ՝ այնպիսի աշխատազներ ունենալու խնդիրներից, վորոնք դառնում են սոցիալիզմի գիտակից կառուցողներ:

Իսկ ի՞նչ ե իրանից ենրկայացնում կօխոսզի պլանը, ի՞նչ և նշանակում կօխոզի ենտեսությունը վարել պլանով, ի՞նչ-պիսի պլաններ են լրնաւ կօխոզում:

Խորհրդային Միության ժողովրդական տնտեսությունը կառուցվում ե պլանի համաձայն, վորը հանդիսանում է բանվոր դասակարգի կամքի արտահայտությունը սոցիալիզմ կառուցել պայքարելով իր տնտեսական-քարաքական խնդիրների իրագործման համար:

Ծրասնական ժողովրդատնտեսական պլանը — զա սոցիալական տնտեսությունն ամրացնելու պայքարի ուղին ե,

զա սոցիալիզմն ամրացնելու զենքն է մեր յերկրում: Դրա փայլուն ապացույցը հանդիսանում է առաջին հնգամյակի պլանը չորս տարում իրագործելը, վորը դարձավ պրոլետարիատի գիկատառուրայի հզոր լժակը, ապահովեց սոցիալիզմի հիմքի կառուցումը մեր յերկրում: Պլանները կոլխոզում են զանագան — տարեկան, այսպես կօչված արտադրական-Ֆինանսական պլան վորը նախատեսնում է կոլխոզի հասարակական տնտեսության զարգացումը տարվա ընթացքում: Այսատանիքային պլաններ, վորոնք վորոշում են արտադրության միջոցների ու կոլխոզնիկների դասավորման կարգն ու ձեզերը աշխատանքի վորոշ սեղուում, և ուղղված են տարեկան-արտադրական ֆինանսական պլանը գործնականապես կատարելու կողմը: Կոլխոզի տարեկան արտադրական-ֆինանսական պլանը կառուցվում է պրոլետարական պետության ժողովրդական տնտեսության առաջարրության հիման վրա: Այդ առաջարրությունը տըրպում ե հոկիչ թվերի ձեռվ ըստ ցանքսատարածությունների բերքի բարձրացման, անասնապահական զարգացման և այլն:

Հետեւվարար, կոլխոզի արտադրական-ֆինանսական պլանը կապվում է պրոլետարական պետության ժողովնեսության պլանի հետ՝ ժողովրդական տնտեսության առաջարրության միջոցով, վորը հանդիսանում է բանվոր դասակարգի հրահանգը և վորը ցույց է տալիս, թե ինչպես կոլխոզը պարտավոր է զարգացնել իր տնտեսությունը: Ահա թե ինչու կոլխոզի պլանը հանդիսանում է կոլխոզը զեկավարելու զենք՝ ողբոլետարական պետության կողմից: Ահա թե ինչու պարզ և հասկանալի յե գառնում այն, թե առանց պլանի չի կարող լինել կոլխոզ: Իրոք, յեթե գոյություն ունենար այնպիսի կոլխոզ, վորտեղ պլան չիներ, այդ գեալքում կազմակերպված էալ չալ չեց լինի մի կողմից կոլխոզի ու մյուս կողմից ժողովրդական տնտեսության միջև: Այդ կոլխոզն անիւուա-

փելիորեն կանցներ գասակարգային թշնամու ձեռքը, վորը կողավեր կոլխողի «ազատությունից», վորպեսզի նրան քայշայի:

Եերբ կոլխողն ունի ժողովրդական-տնտեսական առաջադրության հիման վրա կառուցված տարեկան պլան, ապա այդպիսի կոլխողում կոլխողնիկները պարզ գիտակցությամբ պատկերացնում են իրենց դարգացման ուղին, այդպիսի կոլխողում կան պայմաններ, բոլշևիկյան կարգապահություն անցկացնելու, կա գենք ամրացնելու իր տնտեսությունը: Կոլխողնիկները հանգիստ են վաղվա որդիա համար: Զնայած նրանց ճանապարհին շատ դժվարություններ կան, բայց նրանք գիտեն այդ դժվարությունները, գիտեն, թե ինչ պետք է անեն, ինչպես լավ արդյունքներ ստանան թե կոլխոզի և թե կոլխոզնիկների համար: Պահնը կոլխոզում մացնում է կազմակերպվածություն, կարգ, կարգապահություն և նրա ձիշտ իրազործման դեպքում՝ պլանը դառնում է կոլխոզական կարգի ամրացման, կոլխոզնիկների ուրախ կուլտուրական, ունեվոր կյանքի ամրացման հզոր զենք:

Սոցիալիստական շինարարության հաջողություններն առաջացրին և առաջացնում են մեռնող կուլակության մնացորդների, բուրժուական ինտելիգենցիայի և մյուսների կատաղի գիւմադրություն: Այդ գիւմադրությունն արտահայտվում է զանազան ձեզերով, սկսած վնասարար տնտեսությունների տարածումից, վորոնք ուղղված են սոցիալիստական շինարարության վիճեցման և կապիտալիզմի վերադիր կողմը, մինչև դասակարգային թշնամիների քայքայիչ աշխատանքը ականափորության ձեռվ կոլխոզներում ու սովխոզներում: Ժողովրդական-տնտեսության, ինչպես և գյուղատնտեսության պլանավորումը սոցիալիզմի կառուցման համար տարգող պայքարի այդ կարեկորագույն ճակատամասը—չի կարող մնալ դասակարգային թշնամիների

ուշադրությունից դուրս, վորոնք զանազան ձևերով վոր ձում են պլանը մեր յերկում սոցիալիզմ կառուցելու զենքից, կոլխոզների ամրացման գենքից դարձնել կոլխոզների քայքայման և կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության հաստատման գենք: Յասակարգային թշնամու կողմից պլանն ուղղելու այդ փորձերն ընդգեմ բանվորների ու գյուղացիների շահերի, արտահայտվեցին գյուղատնտեսության պլանավորման վնասարար ձև տալու միջցոսով: Այսպես, որինակա գործում եր Չայցանովի և Կոնտրատելի վնասարար խմբակը, վորը կուլակային անտեսությանն առաջ եր քաշում վորպես գյուղատնտեսության հիմնական ձևի, հակառակ սովխոզների ու կոլխոզների գյուղատնտեսության վերակառուցման և գյուղացիական լայն մասսաների բարեկեցության վերելքի այդ սխակ ճիշտ ուղուն: Վնասարարները, վորոնց բաց արեց Պետքադիմությունը Հողժողկոմատում և նախկին Տրակտորակենտրոնում, սխալ եյին պլանավորում գյուղատնտեսական մեքենաների և պահեստի մասերի տեղափոխումը, ցանքատարածությունները, ազգա-տեխնիկական միջոցառումները (հաստատում եյին նոսր վար, լայն վերցնող գործիքներ և այլն) և գրանով փորձում եյին դժվարություններ առաջացնել գյուղատնտեսության մեջ և դժգոհություն կուսակցության քաղաքականության նկատմամբ՝ աշխատավոր գյուղացիության լայն մասսաների կողմից, գրգռելով նրանց խորհրդային իշխանության զեմ:

Կուլակության գործակալները, վորոնք խցկվել են ՄՏ կայաններում ու կոլխոզներում, աշխատում են ոգտագործել պլանավորումը և հենց ՄՏ կայանի ու կոլխոզի ամրացման պլանները: Նրանք—կուլակության մնացորդները, վնասարարները, կուլակի գործակալները սխալ են բաշխում ցանքատարածությունները կոլխոզների միջև՝ հատկապես շարատունկ բույսերը, վորպեսզի ահագին դժվարություն-

ներ առաջացնեն առանձին կոլխոզներում, այդ բույսերի խնամքի ու բերքահավաքի գործում: Այսպես, որինակ՝ Դլութովկինսկի ՄՏ կայանում 1934 թվի գարնանացանի պլանը կազմակերպելիս, փորձ յեղավ այնպես բաշխել շարատունկ բույսերի ցանքը, վորպեսզի մի քանի կոլխոզներում մեկ աշխատունակ կոլխոզնիկին հասնի Յ հեկտար, խակ ուրիշ կոլխոզներում՝ 1—1,25 հեկտար: Պարզ է, վորչարատունկ բույսերի ցանքի լարվածության անհամաշափությունը կառաջացներ աշխատանքի լարվածության անհամաշափություն և վորպես հետեվանք դրան, կարող երձեղքվածքներ առաջացնել տնտեսական աշխատանքում: Բացի այդ ճանապարհից, վասարար պլանավորումը կարող է արտահայտվել ուրիշ ձեվերով—ցանքատարածությունների բաշխումն, առանց շրջանացանի հաշվառման, բերքատվության սխալ, այն ե՞ բարձ կամ ցածր պլանավորումը, վորը կարող է վատ հետեվանքների հասցնել: Յեկամունները բաշխելիս կամ կոլխոզնիկները հաց չեն ստանում աշխորեքի դիմաց, կամ ընդհակառակ՝ իսկական բերքը տալիս և այլ արդյունք, քան թե նկատի յեր տունված պլանով, մի բան, վոր կարող է կոլխոզնիկների մեջ զժգնություն առաջացնել: Վոչ աշխատունակ անաստների բարձր հսկիչ թվերն առաջացնում են աճման փոխարեն անաստնապահության կրծատում: Տրակտորների և այլ յուրաքանչետական մեքենաների սխալ բաշխումը կոլխոզների միջև, կարող է ձեղքվածքներ առաջացնել տնտեսական քաղաքական կամպանիաների ընթացքում: Ահա թե ինչու չի կարելի թուլացնել զգոնությունը դասակարգային թշնամունկատմար, ՄՏ կայաններում և կոլխոզներում պլանները կազմված: Այդ աշխատանքը պետք է քաղաքին համապատասխան ուղղության ուղղականությանը հանձնել, պլանի մշակման մեջ ներդրավելով բանվորական և կոլխոզային լայն մասաւներին:

V.

Ի՞նչ ուղղությամբ պետք է կազմվեն արտֆինսվանները 1934 թվին կոլխոզներում: Ի՞նչպիսի մասերից ե բազկացած կոլխոզի արտֆինսվանը, ի՞նչպիսի հիմնական խնդիրներ պետք ե լուծվեն արտֆինսվանը կազմելիս:

Կոլխոզի 1934 թվի պլանները պետք ե կազմվեն՝ յելակետուննարվ կոլխոզների հետագա վերելքի ու կազմակերպչական-տնտեսական ամրացման, բոլոր կոլխոզները իսկական բոլեկիլյան, կոլխոզնիկներին ունել վոր, կուլտուրական աշխատողներ դարձնելու խնդիրները: 1933 թիվը զժվարությունների վերջին տարին եր: Ճիմսական զժվարությունները մնացին հետեվում, առջեվում բացված ե գյուղատնտեսության չափաված զարգացման, նրա վերելքի լայն ուղի՝ տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների բավարարության ոգտագործման, աղնիվ կոլխոզային աշխատանքի, հասարակական սեփականության ամրացման հիման վրա:

Գլխավոր խնդիրը, վոր դրված ե կոլխոզների առաջ 1934 թվին—դա բերքատվության բարձրացումն է: Այդ խնդիրը պետք է կոնկրետ արտահայտվի կոլխոզի արտֆինսվանում բերքի բարձրացման վերաբերյալ ազբուեխնիկական միջոցառումները մանրամասն մշակելով: Դրանց թվում ամենազգայուր տեղը պետք է հատկացվի ցանքերի տեղափորմանը ցանքաշրջանառության դաշտերում, վորպես բերքի բարձրացման լավագույն միջոցներից մեկը: 1933 թվի աշնանը՝ յերկրամասի կոլխոզների մեծամասնությունն աշխատացանը կատարեց շրջանացանության, հատկացրած դաշտերում, 1934 թվի գարնանից անհրաժեշտ ե ամբողջովին անցնել շրջանացանությանը, վճարաբար պայքարելով շրջանացանի պլանից դուրս առանձին բույսեր ցաներու փորձերի դեմ: Ահա թե ինչու կոլխոզի ցանքատարածությունները տեղափորելիս, անհրաժեշտ ե դուրս գալ գոյությունները տեղափորելիս:

յող շրջանացաններից, մոտենալով այդ հարցին վոչ թե մեխանիկորեն, այլ հաշվի առնելով նախորդ բույսերը, մոլախոտերը (որինակ — ճրագախոտը) յեվ այլն: Բացի շրջանացանքից, կոլխոզի պլանում մանրամասն պետք է մշակվեն բերքատվության բարձրացման այնպիսի ագրոտեխնիկական միջոցառումներ, ինչպես ձյունը դաշտերում պահելը, սերմացվի ախտահանումը, տեսակավորումը, գերափաղ ցանքը, պայցքար մոլախոտորի գեմ, ցել անելը և այլն: Բերքի բարձրացման վերաբերյալ ագրոտեխնիկական միջոցառումներից հատկապես կարենվոր նշանակություն ե ձեռք բերում պայցքարը մոլախոտերի գեմ: Կոլխոզի պլանում անհրաժեշտ ե նախատեսել մոլախոտերի վոչնչացումը վոչ միայն դաշտերում, այլ և արտատեղերում, թմբերում, ուղիներում, բացատներում: Մոլախոտերի գեմ պայցքարելիս ահազին նշանակություն ե ձեռք բերում խոր վարը և արտատեղերի վարը: Ազրոտեխնիկական միջոցառումների անցկացման համար առաջին հերթին պետք ե պատասխանատու լինի արտադրական բրիգազը, դրա համար ազրոտեխնիկական միջոցառումների պլանավորումը պետք ե հասցնել ամեն մի բրիգազի, առաջադրության ձեվով: Ցանքատարածությունների պլանավորումը, ինչպես ցույց ե տրված վերենվում, հիմնվում ե ցանքի կոնկրետ թվերի վրա, վորոնք արվում են յուրաքանչյուր կոլխոզի, ՄՏ կայանի, իսկ վորտեղ նրանք չկան — հողբաժնին: Ցանքատարածությունների լայնացումն ստուգիչ թվերի հանդիսանում ե մեր ամենապլիսավոր ինդիքը: Սակայն յեթե կոլխոզի արտադրական հնարավորությունները թույլ են տալիս ցանել պետության վրայած առաջարությունից ավելի, և յեթե այդ լայնացումը չի ջլատի շրջանացանը, ապա ցանքը պետք ե լայնացնել վոչ իմաստ վորակի, հաշվի առնելով, վոր պլանից գուրք ցանքած տարածություններից պետությունը հաց չի վերցնում հացահանձման կարգով, հետեւվարար այդ

լրացուցիչ դաշտերի ընդհանուր բերքը կավելացնի կոլխոզների ու կոլխոզի յեկամուտները:

Ազրոտեխնիկական միջոցառումների կիրառման հիման վրա, կոլխոզի պլանում պետք ե նախագծված լինի յուրաքանչյուր բույսի բերքատվությունը մի հեկտարից՝ նույնպես և ընդհանուր բերքը, վորը կարելի յե վորոշել իմանալով ցանքատարածությունները և յուրաքանչյուր բույսի բերքատվությունը: Պետք ե վորոշել բերքատվության առաջարությունը վոչ միայն ընդհանրապես կոլխոզում, այլև յուրաքանչյուր բրիգազում: Դա շատ լուրջ խնդիր ե, վորը պետք ե լուծել կոլխոզների ամենալայն մասնակցությամբ, առանձմանելով բերքատվությունը յուրաքանչյուր բրիգազում, հաշվի առնելով հողի վորակը, մոլախոտերը, նախորդ բույշերը և այլն: Դաշտային բույսերի ցանքի առաջարությունը պետք ե ամբաջնել յուրաքանչյուր արտադրական բրիգազին: Յուրաքանչյուր արտադրական բրիգազ արտֆինալլը կազմելիս և քննարկելիս պետք ե իմանան, թե նա ինչպիսի բերքի համար ե պատասխանատու, ինչ պետք ե ցանի: Դա շատ կարենվոր ե բրիգազի ամբացման տեսակետից, վորպես կոլխոզի հիմնական արտադրական միավոր: Ցանքային առաջարությունը բրիգազների միջև տեղափոքելիս անհրաժեշտ ե հաշվի առնել թե բրիգազները վորքան ապահոված են աշխատունակ կոլխոզներով, թույլ չտալով մանավանդ շարատունկ տեխնիկական բույսերի ցանքը տեղավորել այնպես, վոր ստեղծվի աշխատանքի անհամաշափ լարվածությունը Որինակ, չի կարելի մի բրիգազում շարունակ տալ 4 հեկտար բույսերի բռնվածություն ամեն մի կոլխոզներին, իսկ մյուս բրիգազում — 1,5 հեկտար: Առաջին բրիգազն անխուսափելիորեն ձեղքածք կունենա, իսկ յերկրորդն ստիպված կլինի ցույց լտալ նրան արտադրական ոգնություն, վորի հետեւվարագով կարող ե խախտվել մշտական արտադրական բրիգազը:

Բացի զաշտավարությունից, կոլխոզի արտֆինսպլանում՝ պետք ե պլանավորել նաև յերկրագործական ուրիշ ձյուղերը, ինչպես—բանջարեղենի ցանքը հողում և ջերմոցներում, պտղատու ծառերի և ծխախոտի տունկը։ Յուրաքանչյուր այդ բույսի կամ ձյուղի համար պետք ե վորոշել սերմացվի կամ տնկանյութերի պահանջը, բերքատվությունը և ընդհանուր բերքը։ Դաշտավարության և յերկրագործական ձյուղերի ամրացման ու վերելքի խնդրի հետ միասին, 1934 թվի պլանում պետք ե հատուկ ուշադրություն դարձնել անասնապահության զարգացման ու ամրացման վրա, թե հասարակական ապրանքային ֆերմաներում ու ֆերմաներից դուրս և թե կոլխոզների անհատական ողտագործման համար։

«Նշելով վորոշ հաջողություններ, վորոնք ձեռք են բերված վերջին տարում անասնապահության գործում սովորողներում ու կոլխոզներում—հատկապիս աճումը—պետք ե պարտավորեցնել սովորողներին, կոլխոզներին և անհատական տնտեսություններին, բոլոր խորհրդային տեղական մարմիններին առաջվանման հատուկ ուշադրություն դարձնել անասնապահական հարցերին, ապահովելով անասունների հետագա ավելացումը, գրանց լավ խնամքը և ապրանքային արտադրանքի բարձրացումը» (Համեմատագործկոմի չորրորդ նատաշրջանի վորոշումից 1934 թվի պլանի մասին):

Անասնապահությունը պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել ջանել անասունների աճումը, նույնպես և կենդանիների վնասը, մթերքների հանձնումը պետությանը՝ պարտադիր հանձնումների հիման վրա, ապրանքային արտադրանքի վաճառումը կոլխոզային առևտուրի կարգով, նաև անասունների մի մասի վաճառումը կոլխոզներին, ինչպես հորթեր, խոճկորներ (խոզի ճտեր), գառներ, նրանց անհատական աճեցման համար։ Պարզ ե, վոր անասնապահության զար-

գացման պլանը պետք ե նախատեսի նրա հետագա վերելքը, նրա աճումը։

Պլանը կազմվում ե ըստ անասունների տեսակների և ճյուղերի, առանձին-առանձին։ Պետք ե մանրամասն մշակվի նաև կենդանիների հղիացման պլանն ըստ ամիսների և ըստ նրանց տեսակների։ Ընդ ամիսն անհրաժեշտ է նախատեսել արտադրող կենդանիների (արուների) առկայությունը, նրանց կերակրումը, անսպեաքների փոխարինումն և այլն։ Անասնապահության հաջող զարգացման հիմքը կազմում է կերի հարցի բարենպաստ լուծումը։ Մհա թե ինչու կոլխոզի արտփինալլանում հատկապես ուշադրությամբ պետք ե մշակել կերերի բաժինը, մի կողմից սահմանելով կերի ծախսումը 1934 թվի հունվարի մեկից մինչև նույն թվի բերքնարարի տեսակների, մյուս կողմից վորոշել կերի պահանջը 1934 թվի բերքից մինչև 1935 թվի բերքը։

Անասնապահության մթերքների պետությանը հանձման պլանը պետք ե կազմել յեռամյակներով՝ ըստ արտադրանքի տեսակների (մսի, թուչունների, գոչխարների, խողոքերի, կաթի, բրդի, ձիի և այլն)։ Անհրաժեշտ է առանձին կոլխոզային տակտի կարգով վաճառվելք ապրանքային արտադրանքը, նաև հասարակական սննդի համար գործադրվելք մասը։

Կոլխոզի արտփինալլանում հատկապես պետք ե մշակել արդյունաբերական ոժանդակ ձեռնարկությունների, անայնագործության և գյուղատնտեսության արտադրանքի վերաբական (աղնուր, չորացնելու, յեփելու և այլն) կազմակերպման բաժինը։ Կոլխոզի 1934 թվի արտփինալլանի կարեվորագույն և նոր մօմենտը հանդիսանում է դաշտավարության և անտեսության մյուս ճյուղերի բնական արտադրանքի բաշխման պլանավորումը։ Պետք ե պարզ, հասկանալի բացատրել ամեն մի կոլխոզնիկի պլանային տվյալները։ Այն մասին, թե ի՞նչ են ստանալու կոլխոզնիկները

տարվա վերջն իրենց աշխատանքի համար, ինչպիսի ձառնապարհով կոլխոզը կատարելու յե ընկ. Ստալինի ցուցումը, այն ե՝ «դարձնել բոլոր կոլխոզնիկներին ունելոր»։ Արտադրանքի բաշխման պլանը կազմելիս, առաջին հերթին պետք է վորոշել այն մասը, վորը հանձնվելու յե պետությանը պարտադիր կերպով և պետք է վորոշել մթերավճարումները ՄՏ կայանների աշխատանքի համար, նույնպես և վարկերի վերադարձը։

Յերկրորդ հերթին պետք է նշել այն մասը, վորն առանձնացվում է կոլխոզային պարտադիր ֆոնդերու համար (սերմացու, ապահովագրական ֆոնդ, կերի ֆոնդ)։ Մնացած մասը պետք է բաշխել կոլխոզնիկներին ըստ աշխարերի բոտ վորում յուրաքանչյուր աշխորի յեկամուտը պետք և սահմանել ամեն բույսի համար առանձին։ Կոլխոզնիկների ցանկությամբ (վոչ պակաս, քան նրանց յերկու յերրորդ մասի վորոշումով) կոլխոզում կարելի ե ստեղծել և ուրիշ ֆոնդեր—կոլխոզի անբաժան միջոցներն ավելացնելու համար, կարմիր բանակայինների ընտանիքներին, հաշմանդամներին ոգնելու համար, մանկամուրները պահելու համար և այլն։

Հիմնական արտադրական միավորը կոլխոզներում հանդիսանում է բրիգադը։ Անհրաժեշտ ե ամեն կերպ ամբացնել բրիգադը և ինչպես ցույց ավեց առառային աշխատանքների փորձը, այդ ամբացումն անմիտ ե առանց մշտական բրիգադի։ Բրիգադին պետք է ամրացնել վոչ միայն հողն՝ առնվազն մեկ շրջանացանի ընթացքում, այլև կոլխոզնիկներին, լծկանը, գյուղատնտեսական դործիքները։ Այն կոլխոզներում, վորտեղ խախտել են մշտական արտադրական բրիգադները—գոխադրել են մարդկանց, լծկանը և այլն, —կարդ չի յեղել գոյություն ե ունեցել անպատճախառապություն արտադրական առաջագրությունների կատարման դործում։ Ահա թե ինչու կոլխոզի արտիքինապահություն


անհրաժեշտ և վորոշել մշտական արտադրական բրիգադների կազմը, այն ե—աշխատունակ կոլխոզնիկներին, լծկանը, գյուղատնտեսական դործիքները և այլն։

Բրիգադները կազմելիս պետք է նկատի ունենալ հետեւյալ ցուցմունքները, վորոնք արավ ընկեր Յակովլեն իր գեկուցման մեջ ԽՍՀՄ-ի կենտգործկոմի նստաշրջանում։

«Յերրորդ խնդիրն ե՝ ճիշտ բաժանել մարդկանց ըստ բրիգադների։ Գետք և ճիշտ վորոշել յուրաքանչյուր բրիգադի կազմը, չունենալ, այսպիս կոչված՝ «պահեատի» մարդկանց, վոր մի ժամանակ գործադրում եր շատ կոլխոզներում և վորը տալիս եր այն հետեւնքը, վոր մարդկանց կեսը թափառում եր անգործ և փաստորեն ջլատում բրիգադը, այդպիսով չափանովելով բրիգադի խսկական մշտական կազմը դաշտային աշխատանքների ամբողջ ժամանակի։ Յեթե հաջողվի—իսկ դա պետք ե հաջողվի—առնվազն բոլոր կոլխոզների յերկու յերրորդ մասում գարնանը բրիգադներին հողամասեր հատկացնել, ապա այդ հողամասերը կկազմեն ամենալավ հիմք՝ ձեռավորելու համար յուրաքանչյուր բրիգադի մշտական կազմը։»

Հետեւարար պլանի մշտական ընթացքում անհրաժեշտ ե ճիշտ մշտական բրիգադի կոլխոզնիկների կազմը, վորպեսզի յուրաքանչյուր կոլխոզնիկ իմանա իր տեղը կոլխոզի արտադրության մեջ։ Մշտական բրիգադ կազմելիս, կոլխոզը պետք է առանձնապես լուծի տրակտորային բրիգադի հետ միասին աշխատելու հարցը (այն զեպքում, յեթե պայմանագրի համաձայն ՄՏ կայանը ոգնում է կոլխոզին)։

Պլանում պետք է ցույց տալ թե ինչպիսի աշխատանք և ինչ ժամկետներում ՄՏ կայանը պարտավորվում է անցկացնել կոլխոզում ընդհանրապես և յուրաքանչյուր գաշտավարական բրիգադում առանձնապես։ Բացի այդ, ցույց և արլում, թե ինչքան կոլխոզներու ի համար են ամբաց-



վում տրակառային բրիգադին սպասարկելու համար—մըշ-
տական աշխատողներ, կցորդ մեքենաների աշխատողներ,
ջրկիր, խոհարարուհի, նավթակիր: Վերոհիշյալ կարգի կու-
խողնիկները, վորոնք ջոկված են տրակառային բրիգադի
սպասարկման համար, ներառվում են տրակառային բրի-
գադի մշտական կազմում և մնում են այնուեղ ամրող գյու-
ղատնտեսական տարրված ընթացքում: Ցերե տրակառային
բրիգադը պլանի համաձայն տեղափոխվում է ուրիշ կոլխո-
զում աշխատելու, ապա նրա հետ աեղափոխվում են վերո-
հիշյալ ամրացված կոլխոզնիկները:

Մախսված աշխատանքի հանակի յեկ վորակի չափանիք,
ինչպես հայտնի յե, հանդիսանում ե աշխարք: Կոլխոզի տա-
րեկան պլանում անհրաժեշտ ե նախատեսել աշխորերի
ծախսումը բատ բրիգադների, ճյուղերի, յեռամյակների:
Պետք ե ի նկատի ունենալ, վոր ընդհանրապես վարչական
և սպասարկող մարմինների վրա ծախսած աշխորերի քա-
նակը չպետք ե անցնի կոլխոզում վաստակած աշխորերի
ընդհանուր քանակի տոկոսից, նայած անտեսության չափին
ու բարդությանը:

Կոլխոզի տարեկան պլանը հանդիսանում է արտադրա-
կան ֆինանսական պլանը: Այնտեղ պետք ե նշվեն վոչ մի-
այն արտադրության զարգացման վերաբերյալ միջոցա-
ռումները, այլ և ֆինանսական միջոցառումները: Պահում
յուց և տրվում վարչական աշխատանքների կազմը—վար-
չության անդամներ, հաշվապահ, տնտեսվար, պահապահ,
մանկական հիմնարկների աշխատազներ և այլն: Պետք ե
կազմել գրամական ծախսերի նախահաշիվը փոստ-հեռագրա-
կան ծախսերի, գրքերի ու թանկների, լուսավորության,
վառելիքի, թերթերի, գործուղումների ծախսեր և այլն: Այդ
ծախսերը պետք ե կազմեն վաչ ավելի, քան կոլխոզի ընդ-
հանուր գրամական յեկամուտների 1,5 տոկոսը: Կոլխոզի
ֆինանսական պլանում պետք ե ցույց տրվեն յեկամուտի

բոլոր դրամական ազբյուրները և կոլխոզի ծախսերը: Գլո-
խավոր ներդրումների պլանը կազմվում է առանձին, վոր-
տեղ մտնում են շինարարության, հողի բարեկարգման, գյու-
ղատնտեսական մեքենաներ և գործիքներ գնելու ծախսերը
և այլն: Վորակի հետեւանք կոլխոզի տարեկան անտեսական
գործունեյության, պետք ե մշակել զրամական յեկամուտ-
ների բաշխման նախագիծը և ասհմանել յուրաքանչյուր
աշխարին հասանելիք գրամական յեկամուտի չափը:

VII.

Կոլխոզի արտադրական-ֆինանսական պլանը հանդիսա-
նում է վոչ միայն կոլխոզի տնտեսական զարգացման պլան,
նա պետք ե լինի նաև պայքարի վենք հանուն կուլտու-
րայի, կուլտուրական կյանքի: Անա թե ինչու արտադրա-
կան ֆինանսի անհրաժեշտ բաղադրիչ մասը հանդիսանում է
կուլտուրական միջոցառումների պլանավորումը: Պա-
հում պետք ե նախատեսնաված վինի մանկամտուրների, ման-
կահրապարակների և մանկապարտեկների ցանցի ծավա-
րումը: Այդ միջոցառումները, վորոնք հանրավորություն են
տալիս ազատել կոլխոզնիկունիներին յերեխանների խնամ-
քից և անային տնտեսության հոգսից և մասնակցել ար-
տադրության մեջ տղամարդուն համահավասար, ունեն ահա-
գին նշանակություն: Ընկեր Ստալինը Դնեպրոպետրովսկի
մարզի կոլխոզնիկների հետ զրուցելիս կշամքեց նրանց՝ ան-
բավարար ուշադրության համար զեալի կոլխոզնիկունիները:
Այդ կշամքբանքը վերաբերում է մեր կոլխոզների մեծա-
մասնության, վորոնք գեռ մինչև այժմ քիչ պայմաններ են
սահմանում կոլխոզնիկունիների համար, վորակի նրանք
տղամարդկանց համահավասար մասնակցին արտադրական և
հասարակական կյանքում:

«Կանայք կոլխոզում մեծ ուժ են: Պահել այդ ուժն
անհայտության մեջ—նշանակում ե հանցանք գործել:

Մեր խնդիրն այն է, վոր կանանց առաջ քաշենք կու-
լսողներում և գործի դնենք այդ ուժը» (Ստալին):

Բացի մանկական հիմնարկների ամբացման և զարգաց-
ման վերաբերյալ միջոցառություններից, կոլխոզի պլանում
պետք է նախատեսել դաշտակայանների (տաճօր) կազմա-
կերպումը դաշտառ: Հասարակ գործ չե—կազմակերպել դաշ-
տառ մշտական դաշտակայաններ: Դա կարևորագույն դործ է,
վորը նպաստում է աշխատանքային կարգապահության ամ-
րացմանը, սաեղջում է պայմաններ, վորպեսզի կոլխոզնիկ-
ներն աշխատանքի ընթացքում գտնվին կուլտուրական պայ-
մաններում, վորտեղ նրանք կարող են ժամանակ անցկաց-
նել և հանգստանալ: Խորհրդային Միության կենտրոնակոմի-
նիստում ընկեր Յակովլիը «Գարնանացանի խնդիրների սա-
սին» արած գեկուցման առթիվ սասեց: «Կազմակերպել
դաշտակայաններ գյուղերից հեռու գտնվող վայրերում»:
Յուրաքանչյուր դաշտակայան պետք է ունենա բնակլելու
շենք, խոհանոց, պահեստարան—լծասարքի, մանր գործիք-
ների, նյութերի համար, ջրհոր, ձիամուրներ, մանկամատրի-
շենք: Դաշտային կայաններն անհրաժեշտ ե սարքել ող-
տագործելով տեղական շինանյութերը և հինգել բրիգադ-
ների կոլխոզնիկների նախաձեռնության վրա: Բացի այդ,
պետք է նկատի ունենալ հետեւյալ կուլտ-կենցաղային մի-
ջոցառությունը, հասարակական սննդի կազմակերպումը դաշ-
տառ, կարմիր անկյունների, ռադիոների, շարժական կինո-
նկարների սարքավորումը բրիգադներում և այլն:

VII.

Արտֆինալանը կազմելիս կոլխոզը և կոլխոզնիկները
պարտադիր կերպով պետք է լուծեն մի շարք հարցեր, վո-
րոնք կապված են աշխատանքի կազմակերպության հետ,
առաջին հերթին, սահմանեն աշխատանքի նորմաները և

աշխատանքի գնահատումն ըստ աշխատերի: Մինչև այժմ աշ-
խատանքի նորմաները վորոշելու գործը միշտ շարք կոլխոզ-
ներում շատ վատ էր զրված: Փոխանակ տվյալ կոլխոզի աշ-
խատանքի պայմաններին համապատասխան նորմաներ սահ-
մանելու, հաշվի առնելով հարգածային կոլխոզնիկների աշ-
խատանքի պայմանները, առանց ուղղության կոլխոզնիկների ընդունումը
է, յին յերկրագամում կամ ույսոնում մշակված աշխատանքի
նորմաները: Շնորհիվ այդպիսի մեխանիկական մոտեցման
դեպի աշխատանքի նորմաները, յերբեմն աղնիվ կոլխոզնիկ-
ները, աշխատելով բարեխիզ կերպով, մի քանի աշխա-
տանքներում չեյին կարող աշխատել սահմանած նորմաների
չափը (որինակ), հացը հասարակ հնձիչներով հավաքելիս), իսկ
մյուս աշխատանքներում (որինակ՝ արևածաղկի հավաքումը
ձեռքով) հեշտությամբ գերակատարում եյին նորմաները:
Մտացվում էր այսպիսի գրություն, յերբ արտադրության
մեջ, դաշտում աշխատող կոլխոզնիկն ավելի քիչ աշխատ էր
վաստակում, քան վարչական աշխատանքներում կամ անսա-
նապահության մեջ աշխատողը: Աշխատանքի նորմաների
թերությունների մասին ԽՍՀՄ՝ կենապործկոմի նիստում
շատ մանրամասն խոսեց ընկեր Յակովլիը.

«Աշխատանքի որինակելի նորմաները և գնահա-
տումը շատ գեղեցիկ ունեցած դարձան աշխատանքի կայուն
նորմաներ և գնահատում: Բայց չե՞ վոր վոչ մի որի-
նակելի նորմա չի կարող նախատեսել ամեն ինչ: Տար-
բեր բան ե — պառկած հասկը և տարբեր բան ե —
չպառկածը: Պարզ է, վոր պառկած հասկի հավաքման
համար պետք է նորման ավելի պակաս տալ: Տարբեր
բան ե — կալեկ հասկը բերքառատ տեղամասերում և
տարբեր բան ե — վոչ բերքառատ տեղամասերում: Տար-
բեր բան ե — ամուր հողի վարը և տարբեր բան ե —
փափուկ հողինը: Այդ բոլոր առանձնահատկությունները
պետք է հաշվի առնել յուրաքանչյուր կոլխո-

գում նախորոք, մինչև գարուն, վորպեսզի գարնանը յուրաքանչյուր կոլխոզնիկ խակապես իմանա, թե վորքան աշխատանքի համար, վորքան աշխոր և ստանում: Յուրաքանչյուր կոլխոզում աշխատանքի այդ նորմաները կոլխոզի վարչությունը պարտավոր և քննարկել բրիգադների ու կոլխոզնիկների ամբողջ ակտիվի հետ, լավ կլիներ—կոլխոզնիկների ընդհանուր ժողովում»:

Յուրաքանչյուր կոլխոզում արտադրական պայմաններին համապատասխան աշխատանքի նորմաների սահմանումն ապահովելու համար, ԽՍՀՄ-ի կենտղործկոմի նստաշրջանը գորոշեց, «հաստատել յուրաքանչյուր մարզի համար առանձին աշխատանքի նորմաներ ու գնահատում այն հաշվով, վոր աշխատանքի կայուն նորմաներն ու գնահատումը յուրաքանչյուր կոլխոզում սահմանի կոլխոզի վարչությունը և հաստատի ՄՏ կայանը»:

Աշխատանքի գնահատումը սահմանելիս, անհրաժեշտ է հենվել որինակելի գնահատումների վրա, վորոնք սահմանում են կուսակցության Յերկրկոմն ու Յերկրպործկոմը: Բայ այդ գնահատումների բոլոր աշխատանքները բաժանվում են 7 խմբի, նայած վորակավորմանը, շտապ լինելուն, նրանց կատարման կարեսությանը և ունեն աշխորի գնահատման հետեւյալ չափը.

1	խումբ	· · · · ·	0,5	աշխոր
2	»	· · · · ·	0,75	»
3	»	· · · · ·	1,0	»
4	»	· · · · ·	1,25	»
5	»	· · · · ·	1,5	»
6	»	· · · · ·	1—75	»
7	»	· · · · ·	2,0	»

Գնահատումները սահմանելիս անհրաժեշտ է պահել հիմնական կանոնը՝ դաշտային աշխատանքները պետք են ան-

համեմատ ավելի բարձր գնահատվեն, քան վոչ դաշտային աշխատանքները, վորպեսզի դաշտում աշխատող կոլխոզնիկների համար ստեղծվի նյութական շահագրգովածություն և նրանցից լավագույններին ներգրավել դեպի արտադրական աշխատանքը:

Միաժամանակ գնահատումներն այնպես պետք են կազմված լինեն, վոր խթանալին հատկապես անասնապահության մեջ աշխատող կոլխոզնիկներն ու նրանց հաջող աշխատանքները լծկանի, կաթնառու և մթերասու անասունների խնամքի գործում և այլն:

Բացի աշխատանքի նորմաներից և գործավարձային գնահատումներից, պետք են լուծվեն այնպիսի կարեսությունները, ինչպես մշակական արտադրական բրիգադների կազմակերպման կարգը, վորի մասին ասվեց վերեռում, գործավարձի ձևերը, խմբերի կազմակերպման կարգը և այլն: Գործավարձի կազմակերպման հարցը լուծելիս, պետք են պայքարել անհատական գործավարձ սահմանելու փորձերի գեն աշխատանքներում, վորտեղ նաև արդյունք չի տա, որինակ վարը, ցանը, Փետք են պայքարել նաև աշխատանքը մեծ խմբերով, խոնավածությամբ կազմակերպելու փորձերի գեմ, յերբ գործավարձը սվաղվում են աշխատանքի հաշվառման հավասարեցումով, հնարավորություն տալով ծովովերին պահպել աղնիվ աշխատող կոլխոզնիկների թիկունքում: Աշխատանքների մեծամասնության մեջ՝ վար, ցանքս, քաղցան, հունձ և այլն՝ գործավարձի հիմնական ձեր հանդիսանում է մասնի խմբակային գործավարձը, վորի ժամանակ կոլխոզնիկներն աշխատում են փոքր խմբերով, վորտեղ ապահովում են յուրաքանչյուր առանձին կոլխոզի աշխատանքի անհատական հաշվառումը, աշխատանքի վորակի հակողությունը և բարեխիղ վերաբերմունքը դեպի աշխատանքը: Այսպիսս, որինակ, զարնանավարին կարող են կազմակերպել գութանավորների հատուկ խմբեր 2—4 գութա-

նով, ցանողներ 2—3 շաբաթացաններով, քաղհանի ժամանակ 6—8 քաղհանողներ մի խմբում, հնձի ժամանակ 2—3 հնձիչ մեքենաներ մի խմբում, 6—8 խրձակապիչներ և այլն: Խմբերի կազմակերպմանը բրիգադիրը մեքենորեն չպետք է մոտենա, այլ հաշվի առնի թշկանի գրությունը, կոլխոզնիկների վարժությունը: Ամենառութեղի ծիերը պետք է ողտագործվեն ավելի ծանր աշխատանքների համար — վար, ցանք: Ամենափորձված կոլխոզնիկները պետք է ուղարկվեն ավելի պատասխանառու աշխատանքների համար (գութանավոր, ցանող): Կոլխոզնիկներից խմբեր կազմելիս անհրաժեշտ ե թույլ տալ խմբերը կամագոր համաձայնությամբ ընտրելու ազատություն: Բնդիանրապես խմբի կազմը պետք է լինի մշտական, նախքան նրանց կողմից արտադրական առաջազրություն կատարելը:

VIII.

Կոլխոզի արտադրական-ֆինանսական պլանը չի հանդիսանում թվերի և առաջարկությունների ցուցակ, այլ՝ պայքարի գենք, կատարելու համար պետական առաջադրությունները ցանքի, հացահանձման ու անասնապահության մթերքների վերաբերյալ, կոլխոզների ամրացման, կոլխոզային ունենող կյանքի համար: Ահա թե ինչու պլանի հաջող կատարումն ապահովող պայմաններից մեկը հանդիսանում է կոլխոզային լայն մասսաների մասնակցությունը այդ պլանը կազմելու և մշակելու գործում: Կոլխոզի արտփինալանը կաղմելու շուրջ պետք է մորիկիզացիայի յենթարկվեն կոլխոզային մասսաները: Արտփինալան կազմելն ինքը պետք է դառնա կոլխոզի հասարակական տնտեսության ստուգատես, կոլեկտիվ ստեղծագործական աշխատանք: Ահա թե ինչու արտփինալանը կազմելու համար անհրաժեշտ է կաղմակերպել մի շարք հանձնաժողովներ (որինակ, դաշտավա-

րության, անասնապահության, ագրոտեխնիկայի միջոցաւումների պլանը մշակող հանձնախմբեր), ներգրավելով այդ հանձնախմբերի մեջ լավագույն — հարվածային կոլխոզնիկներին, վորակի տեսուչներին, բրիգադիրներին և այլն: Հանձնառողովի աշխատանքի արդյունքները, ինչպես նաև արտփինալան ամրողապես պետք ե քննարկվեն արտագրական խորհրդակցության մեջ, իսկ պլանը պետք ե հաստատի կոլխոզնիկների ընդհանուր ժողովը: Պահնի ամենապայմանական վորագործությունը՝ ցանքսատարածությունը, բերքատվությունը, անասնապահության զարգացումը, հացահանձման կարգով պետությանը տրվող հացի քանակը, աշխատավանքի յեկամուտը և այլն — դրանք բոլորը պետք ե հասնեն յուրաքանչյուր կոլխոզնիկի և գառնան կոլխոզնիկների առորյա պայքարի լողունգները, կուլտուրական ուներույանքի համար: Կոլխոզի արտփինալանը պետք ե ոգտագործել վորպես ուսուցման ձեռնարկ՝ կոլխոզային ակադիվի գործել աշխատավան սեռնարկ՝ կոլխոզային ակադիվի շանագան կուրսերում, և ուսուցումը սերտորեն կապել կոլխոզի անտեսության հետ արտփինալանի միջոցով: Կոպեկ չարժի այն արտփինալանը, վորը կազմելու յեն առանձին աշխատավանները կարինետներում, առանց կոլխոզային մասսաների մասնակցության: Նրա անցկացումը մատնված է անհաջողության: Դա լավ պետք ե հիշեն կոլխոզների ղեկավարները:

IX

Ինչպես վերևում ասածներից տեսնում ենք, կոլխոզի տարեկան արտփինալանում մատնանշվում են միջոցառութեր, վորոնք վերաբերում են կոլխոզի անտեսական գործունեությանը, վորոշվում են նրա արդյունքները, բայց չեն արվում մարդկանց և միջոցների գասավորման ծավալուն պատկերը՝ այդ միջոցառութերի կատարման համար:

Կարո՞ղ ե արդյոք կոլխոզը մնալ առանց գյուղատնտեսահան աշխատանքների առանձին ժամանակաշրջանների պլանավորման (որինակ, գարնանացանի, բերքահավաքի):

Կարո՞ղ ե արդյոք կոլխոզը հաջողությամբ կատարել տարեկան արտֆինպլանը, յեթե նա չի կազմակերպում կոլխոզնիկներին և չի դասավորում նրանց ըստ ժամանակաշրջանների և այլն:

Վէճ, չի կարող: Արտֆինպլանը հաջողությամբ կատարելու համար, կոլխոզը պարտավոր ե գյուղատնտեսական աշխատանքների յուրաքանչյուր շրջանի համար կազմել կոլխոզնիկների, լծկանի, գյուղատնտեսական մեքենաների դասավորման պլանները, այսպես կոչված՝ աշխատանքային պլանները: Աշխատանքային պլանները նախաեսում են վոչ սիայն այս կամ այն գյուղատնտեսական աշխատանքի անցկացման արտադրական միջոցները, որինակ՝ սերմացու, լծկան, աշխատող ձեռքեր, այլ և այդ միջոցների բաշխումն ըստ ժամանակի և տարածության (աշխատանքի ժամկետերը և տեղը): Այսպես, որինակ, կոլխոզի գարնանացանի կամպանիայի աշխատանքային պլանում պետք ե ցույց տրվեն — ցանքսատարածություններն ըստ բույսերի, սերմացույի պահանջը, ախտահանման միջոցների պահանջը, ցանքային աշխատանքներն անցկացնելու ժամկետերն ըստ բույսերի, լծկանի, գյուղատնտեսական մեքենաների, բանվորական ուժի պահանջը, հասարակական - կենցաղային կարգի միջոցառումներ — այն և հասարակական սննդի կազմակերպումը, մանկական հիմնարկների ցանցի ծավալումը, ագրոտեխնիկական միջոցառումներ, ինչպես, որինակ — վարածի խորությունը, ցանքի նորմաները, սերմացուն ծածեկելու խորությունը, մոլախոտերի գեմ պայքարելը և այլն:

Սակայն կոլխոզային անտեսության պլանավորումն ընդհանրապես կոլխոզի համար միակողմանի կը ար: Դրա համար, վորպեսզի պլանը մոտեցնեն կոլխոզնիկն և ցույց տան նրա

անդը պլանի կատարման գործում, չեն սահմանափակվում միայն արտֆինպլանը կամ աշխատանքային պլանը կազմելով ընդհանրապես ամբողջ կոլխոզի համար, այլ հասցնում են նրան մինչև արտադրական բրիգադը — վերջինիս տարեկան արտադրական առաջադրության ձեռվ և սեղոնային ազգովան - կարգագրի ձևով: Իրոք, արտադրական բրիգադը հանդիսանում ե հիմնական արտադրական ողակ, նապետք ե կազմակերպի աշխատանքն անմիջապես արտադրության մեջ — գաշտում, անասնաբարակում և այլն: Կարո՞ղ եր արդյոք բրիգադը համապատասխանել այդ պայմաննեն, յերբ նա աշխատեր առանց պլանի, չիմանար ինչ անել վհրտել գործել, ինչպես դասավորել ուժերը, վոր ժամկետերին հավաքել ցանել և այլն: Զե, չեր կարող: Այդպիսի բրիգադն անխուսափելի կերպով գաշտ գուրս գալու հետեւյալ ուրը կքայքայվեր և չեր հանդիսանա արտադրական բրիգադ, այլ մարդկանց կուտակում: Ահա թե ինչու կոլխոզի պլանի հիմնական ողակներից մեկը հանդիսանում ե բրիգադի տարեկան արտադրական առաջադրությունը և տգրոպլանկարգագիրը:

Բրիգադի այդ առաջադրության մեջ առաջին հերթին պետք ե ցույց տրված լինի, թե վոր կոլխոզնիկներն ամբողջ գյուղատնտեսական տարում ամրանում են բրիգադին՝ վորպես մշտական աշխատողները: Բրիգադին ամրացված այդ կոլխոզնիկները յենթարկվում են բրիգադիներին, և վորքով, առանց նրա գիտության, չի կարող կոլխոզնիկներին ուղարկել ուրիշ բրիգադ կամ ուրիշ աշխատանքի:

Կոլխոզի արտֆինպլանի հիման վրա, բրիգադի տարեկան առաջադրության մեջ ցույց են տրվում՝ ցանքսատարածություններն ըստ բույսերի, անպայման և պարտադիր կերպով հաշվի առնելով ցանքափոխության լավագույն տեղավորումը հաշվի առնելով ցանքափոխության լավագույն սկտագործումը, նաև գաշտում, աշխատավարել լավագույն սկտագործումը, նաև ցանքի նորմաները, սերմացույի պահանջը և մի հեկտարի

բերքը: Թէ ցանքի նորմաները և թէ բերքը պետք ե յուրաքանչյուր բրիգադի համար սահմանվեն առանձին, հաշվի առնելով հողի, նրանց մակերեսի առանձնահատկությունները, մոլախոտերի գոյությունը և խակապես ապահովել հասարակական աշխատանքի բարձր արտադրողականությունը:

Արտադրական բրիգադին տալով բերքատվության առաջադրություն, անհրաժեշտ և ապահովել նրա կատարումն անցկացնելով մի շաբթ ազգութեանիկական միջոցառումներ, այն և — ձյունը պահելը, գերավադ ցանքը, գարնան հարմարեցրած սերմերի ցանքը, հասկային բույսերի ցանքի ճիշտ ժամկետերը, սերմացույի տեսակավորումը և ախտահանումը, խոտի վարը, մոլախութերի վոչնչացումը, քաղճանը և այլն: Ազրոտեխնիկական միջոցառումները պետք ե մասնամասն մշակվեն և քննարկվեն կոլխոզնիկների հետ միասին:

Վերևում մենք նշեցինք, վոր կոլխոզի պլանում պարտադիր կերպով պետք ե ցույց արվեն այն աշխատանքները, վոր կատարվում ե ՄՏԿայանում: Դա — պետք ե պարտադիր կերպով ցույց արվի նաև բրիգադի տարեկան արտադրական առաջադրության մեջ, հակառակ դեպքում բրիգադիրը չի կարող ճիշտ դասավորել կոլխոզնիկներին, ճիշտ համատեղել ձիու և տրակառի աշխատանքը, իսկ այդ բոլորը, ինչպես ցույց տվեց վերջին տարիների փորձը, խախտում են կոլխոզային բրիգադի կայունությունը, ջլատում են բրիգադը: Բրիգադի տարեկան արտադրական առաջադրության մեջ, ըստ գյուղատնտեսական աշխատանքների, պետք ե մանրամասն նկատի առնվեն աշխատանքի կատարման ժամկետերը և աշխատի ծախսումն, իմանալով աշխատանքների ծավալը, աշխատանքի նորման և աշխատանքի գնահատումն ըստ աշխարերի: Առաջադրության մեջ ցույց ե տրվում նույնագես, թե ինչպիսի ճիեր (կամ յեղներ), ինչպիսի գյուղատնտեսական գործիքներ և լծասարք են ամրացվում առանձին կոլխոզնիկներին (և ամբողջ բրիգադին), վորոնք պատաս-

խանատու յեն նրանց պահպանման համար, հասարակական սոցիալստական սեփականության պահպանման կարգով: Աշխատող անսառուններին պահելու համար բրիգադին պետք ե հատկացնել վորոնք քանակությամբ կերեր, վորոնք որվում են նրան ստորագրությամբ:

Հատկապես մանրամասնորեն բրիգադի տարեկան արտադրական առաջադրության մեջ պետք ե մշակել նոր դաշտակայանի կազմակերպման կամ հնի սարքավորման ավարտման կարգը:

Բրիգադի տարեկան արտադրական առաջադրությունը կազմելիս, հարկավոր և հատուկ ուշագրություն դարձնել բրիգադի անդամների հասանելիք աշխարերի քանակի ճիշտ հաշվառման վրա, այսինքն՝ թե ինչքան պետք ե զրել արտադրության մեջ աշխատազների հաշվին, ինչքան բրիգադիրին, ճիշտապես և այլն:

Բրիգադի ներսում պլանը պետք ե հասցնել յուրաքանչյուր կոլխոզնիկի, վորպես արտադրական առաջադրություն, առանձին աշխատանքային խմբերին այն հաշվով, վոր ամեն մի կոլխոզնիկ իմանա տշխատանքի տեղը, աշխատանքի նորմաները և այն վորակական ցուցանիշները, վորոնք պետք ե կատարվեն աշխատանքի ընթացքում: Առանց դրան պլանը կլինի վոչ թի պայքարի հենք կոլխոզի ամբացման համար, այլ անպետք թուղթ:

X.

Սակայն բրիգադի ներսում պլանավորումը չի կարելի սահմանափակել միայն տարեկան արտադրական առաջադրություն կազմելով:

Բրիգադը պետք ե ամեն որ իմանա, թե վարտեղ և ինչ պետք ե անի, ինչպես ավելի լավ ե դասավորել ուժերն աշխատանքի ընթացքում, ինչպես ավելի լավ և ավելի շուտ

կատարել արտադրական առաջադրությունը։ Դրա համար, բացի տարեկան արտադրական առաջադրությունից, անհրաժեշտ է, վոր այս կամ այն գյուղատնտեսական կամքանիքայի ժամանակ, յուրաքանչյուր բրիգադի հերթին ունենա աշխատանքային պլան, կամ, ինչպնս ընդունված է տառել, ազրովլան-կարգագիր, առանց վորի բրիգադն անխուսափելի կերպով կշփոթվի աշխատանքի հասարակական կազմակերպման գործում և իրականում գոյություն չի ունենա, վորպես կազմակերպված, ակտիվ գործող միավոր։

Սակայն, բրիգադի աշխատանքային պլանում նախատեսել այս կամ այն աշխատանքի կատարման կարգն ուժամկետերը, հաշվի առնելով արտադրական միջոցների պահանջը, նրանց ոգտագործման կարգը—դա դեռ բոլորը չեն դառ բավական չեն։ Զե՞ վոր բրիգադը՝ վոչ միայն աշխատանքային միավոր և—մարդկանց և արտադրական միջոցների ամբողջություն, —վոր մեքենորեն կատարում է արտադրական առաջադրությունը։ Բրիգադը—դա կոլխոզնիկների կազմակերպված մի մասն է, վոր անդաման կերպով կապված է ամբողջությանը, կոլխոզին, առաջին հերթին պատասխանատու լինելով բերքի բարձրացման համար, իրեն ամրացրած հողամասի կուլտուրական դրության համար։ Զե՞ վոր հենց կոլխոզային բրիգադն է փաստորեն իրագործում բոլոր այն միջացառումները, վորոնք նշել են կոլխոզն իր արտադրական պլանում։ Զե՞ վոր կոլխոզային բրիգադն է, վոր հանգիստական ապրութեանիկան նոր սոցիալիստական հետեւանքով անցկացնողը։

Ազրութեանիկան—դա առաջին հերթին աշխատանքի ժամկետը են, —վարի խորությունը, ցանքի ձեւը, մաքրատեսակ սերմացումն և այլն։ Դա առաջին հերթին գյուղատնտեսական աշխատանքների վորակն է, վարի, ցանքի, տափանելու, քաղհանի վորակը և այլն։ Այդ ազրութեանիկան գործնականում կիրառվում է բրիգադում աշխատանքի ըն-

թացքում, հետեւաբար բրիգադի կոլխոզնիկները պետք է իմանան այդ ազրութեանիկան, պետք են հաշվի առնեն նրան պլանի շրջանում, նախորոք քննարկեն նրան, անցկացնեն կազմակերպված և համառ, և անցկացնեն առանց թուլացնելու, ինչպես մինչեւ այժմ անց եյին կացնում, այլ անցկացնեն։ Հաշվի առնելով աշխատանքի տեղն ու ժամանակը (հաշվի առնելով հողի ամեն մի կտորը, հաշվի առնելով այդ կտորում աճող բույսը)։ Ահա թե ինչու պետք են ազրութեանիկան մացնել պլանի մեջ (առանց դրան չի կարելի) և յուրաքանչյուր բրիգադ զինել ազրութեանիկան պլանով։

Ահա թե ինչու կոլխոզի յուրաքանչյուր արտադրական բրիգադը պետք է զինված լինի ազրոնոմիական պլանով։

Բրիգադում յերկու պլաններ—աշխատանքային և ազրութամկետ աշխատանքը պարզ դարձնելու համար, այդ յերկու պլանների հիմնական մասերը միացրած են վորպես մի ամբողջություն, միասնական պլան, վորը բրիգադում կոչվում է ազրոպլան-կարգագիր։

Հետեւաբար՝ ազրոպլան-կարգագիր կոչվաւ է կօլխոզնիկների յեվ արտադրության միջոցների դառավորման պլանը առանձին գյուղատնտեսական կամպանիայի ժամանակաշրջանում յեվ միաժամանակ վարած վարակական գուցանիքների (Վարքի խորության, մալախութեի վաշնացման յեվ այլն) կատարման պլանը, ինչպիսի ցուցանիշները հատուկ են այս կամ այն ազրոնոմիական միջացառումին կամ ձեւն, վորոնք պետք է կիրառվեն արտադրական առաջադրությունը կատարելու ժամանակ։

XL

Դասակարգային թշնամին, վոր դեռ վերջնականապես դուրս չի շպրտվել կոլխոզից և թագնվել ե այնտեղ, վորպեսզի «ականափորությամբ» քայքայիչ աշխատանք տանի կոլ-

խողի ներսում, պլանը կազմելու մոմենտին (լինի դա արտ-
ֆինպլան կամ աշխատանքային պլան) կփորձե ոգտագոր-
ծել իր գասակարգային շահերի ոգտին: Նա կփորձի զորա-
հավաքել կոլխոզնիկների մի մասի մանր-սեփականատի-
րական սովորությունների մնացորդներն, ընդուեմ պետական
պարտավորությունների առաջնահերթ կատարման, ընդ-
դեմ բերքատվության բարձրացման, աշխորեքը ծախծինելու,
աշխորի յեկամուտան իջեցնելու համար և այլն: Ահա թե
ինչու պլանները կազմելու ընթացքում, պետք ե հանդես
բերել գասակարգային հատուկ զգանություն, արմատից
կտրելով գասակարգային թշնամու փորձերը, վորոնք ուղ-
ղված են պրոլետարական պետության, կոլխոզների ու կոլ-
խոզնիկների շահերի գեմ: Յեվ այդ տեսակետց կոլխոզնիկ-
ներին պետք ե ոգնեն քաղրաժինները — լենինյան կուսակ-
ցության այդ բոլշևիկյան շտապները դյուզում:



Отв. редактор Г. А. ПОТЕНИ

Тех. ред. О. ТЕР-ДАВЫДОВ

Сдано в набор 7.II.1934 г.
Издан. 102/3680 с.х.
Формат бумаги Б5 125x17
Упаковка картон № Б-254

Подписано в печ 10.II 1934 г.
Объем 1 печ. листа.
Закл. з 799.
Тираж 1000 экз

Типография им. „Стаканы 1902 года“ АЧПТ в г. Ростове на Дону

«Ազգային գրադարան



NL0204307

5368

30.381

ԳԻՆԸ
Цена 15 դր.
коп.

1
2

На армянском языке

Л. Андреев

БЕЗ ПЛАНА НЕТ КОЛХОЗА

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱՊԱՇԽԱՑ

ԱՊՈՍՏՈԼ-ԴՐԱ ՄՈՒԿՈՎՈՎԻՉՅԱ ՓՈԼ. № 53

ԳՐԱԿԵՐՊՈՒ (ԿԱԿՊԵՐԵԱՐ)